



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

10742

մ.
դ.

Ս. ԲԱԽՄՈՒՏՍՎԱՅԱ

:: ԻՆՉՈ՞Վ ԿԱՐՈՂ Ե
 :: ՈԳՆԵԼ ՊԻՈՆԵՐԸ—
 ԱՌՈՂՋ ՓՈԽԱՐԻՆՈՂՆԵՐԻ
 ԴԱՍՏԻԱՐԱԿ ՈՒԹՅԱՆԸ

Թարգմ. Գ. Ազնապուրյան

БИВНОВА
 ИНСТИТУТА
 ВОСТОКОВЕДЕНИЯ
 Академия Наук
 СССР

ЗК-ОП
 Р-21

ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ «ՅՅՈՒՄԻՍԱՅԻՆ ԿՈՎԿԱՍ»
 1932 ԲՈՍՏՈՎ-ԴՈՆ

3 K 1011
P-21

Ս. ԱՆԿԵՐԱՆՈՒՄՆԵՐ

32-K
24 SEP 2008 22

1 DEC 2009

ԻՆՉՈ՞Վ ԿԱՐՈՂ Ե ՈԳՆԵԼ ՊԻՈՆՆԵՐԸ
ԱՌՈՂՁ ՓՈՒԱՐԻՆՈՂՆԵՐԻ ԴԱՍՏԱՐԱԿՈՒՅՅԱՆԸ

Քարգմ. Գ. ԱԶՆԱՎՈՒՅՄՆԵ

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

ՊԻՈՆՆԵՐՆԵՐԸ ՊԵՏԲ Ե ՈԳՆԵՆ ԿՆՈՁ ԱԶՆԱՎՈՒՅՄՆԵ

Սոցիալիզմի կառուցման գործում պիոներները—
մեր փոխարինողներն են, միաժամանակ այդ մեծ գոր-
ծում մեր ոգնականները: Նրանք ԽՍՀՄ-ի աշխատա-
վորութեան հսկայական կոլեկտիվի անդամներն են և
սոցիալիզմի կառուցման գործում մեծերի հետ համա-
հավասար ակտիվ մասնակցութիւն են ցույց տալիս:

Պիոներները պայքարում են բանվորների և կոլ-
տնտեսականների շարքերում, ֆաբրիկաների, գործարան-
ների, խորհրտնտեսութիւնների և կոլտնտեսութիւն-
ների արտադրական ծրագրերի կատարման և զերա-
կատարման համար:

Պիոներներն աշխատում են մեր հսկա շինարարու-
թեան բոլոր բնագավառներում:

Լինի դա՛ անգրագիտութեան վերացումը, պայքար
հարբեցողութեան, ծխելու դեմ, լինի դա ցանքսի, մսուր-
ների և այլ կամպանիաների անցկացումը, կամ մաք-
րութեան շարաթ կազմակերպելիս—բոլոր աշխատանքներ-
ների հետ ձեռք-ձեռքի տված, մեր աշխատանքներում
պիոներները միշտ ոգնում են մեզ:

27.02.2013

10742

Յեզվ պետք է խոստովանել, վոր պիտոներնրի մի-
լիոնավոր բանակի աշխատանքը մեր ամբողջ շինարար-
ության մեջ մեծ տեղ է բռնել:

Ահա այդ պատճառով պիտոներնրի կազմակերպված
մասնակցությունը հասարակական վորևե ձեռնարկու-
թյան մեջ միշտ էլ գնահատելի յե մեզ համար:

Մենք ավարտեցինք հնգամյակի յերրորդ, վճռական
տարին և թևակոխեցինք մեծ պլանի շորրորդ և ավար-
տականը: Մեր յերկիրը լարում է իր բոլոր ուժերը,
վորպեսզի կատարի և գերակատարի նշանակված ծրու-
գիրը: Արտադրողական աշխատանքում ներգրավվում
են տղամարդկանց և կանանց նորանոր միլիոններ, վեր-
ջինների շարքում-հարյուր հազարավոր մայրեր:

Դեռ մինչ այժմ մայրերի վզին է ընկած յերեխա-
ների հոգար: Վորպեսզի մայրերը կարողանան մասնակ-
ցել սոցիալիզմի կառուցման գործին, նախ և առաջ
պետք է թեթևացնել նրանց այդ հոգար:

Դրա համար մենք կազմակերպում ենք մսուրներ:

ՄՍՈՒՐՆԵՐԸ ԳԱՍՏԱՐԱՎՈՒՄ ԵՆ ԱՌՈՂՁ ՓՈՒՍԱՐԻ- ՆՈՂՆԵՐ

Մսուրները-դա այն հիմնարկն է, վորտեղ աշխատող
մայրը աշխատանքի ժամերի ընթացքում թողնում է իր
յերեխային: Վորպեսզի մայրը հանգիստ սրտով աշխա-
տի, նա պետք է համոզված լինի, վոր իր յերեխան
գտնվում է վստահելի հսկողության տակ:

Վատահելի հսկողությունը, մսուրներում գտնված
յերեխաների լավ և ուղիղ դաստիարակությունը կարևոր
են վոչ միայն մայրերի հանգստության համար: Մսուր-
ներում դաստիարակվում է սոցիալիզմ կառուցողների
ապագա փոխարինողը, վորին պետք է տալ կոմունիս-
տական դաստիարակություն: Նա պետք է լինի
ամուր, առողջ, աշխատանքը սիրող և վարժված կոլեկ-
տիվ կյանքին և աշխատանքին:

ՀԱՍՏԱՐԱՎՈՒՄ

Դա մեծ և կարևոր գործ է, և պիտոներնրը այդ
աշխատանքին պիտի ցույց տան իրենց ամենայնուս-
գուն մասնակցությունը:

ՊԻՈՆՆԵՐԸ ՊԵՏԲ Ե ՈԳՆԻ ՄՍՈՒՐՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆԸ

Անցյալ տարի ԽՍՀՄ միայն խորհրտեսուլթյուն-
ներում և կոլտնտեսուլթյուններում սպասարկվում էին
մսուրների միջոցով միլիոնից ավելի յերեխաներ: Դա
համարյա թե յերկու և կես անգամ ավելի յե, քան
նախանցյալ տարի: Համեմատած մսուրների պահանջի
հետ, այդքանն էլ դեռ բավական չէ:

Արդյունաբերության մեջ 1932 թվին պետք է մաս-
նակցեն 1.200 հազար կանայք:

Նրանցից շատերը յերեխաներ ունեն, վորոնց հա-
մար արտակարգ կերպով պետք է մսուրներ կազմա-
կերպել:

Շատ տեղերում մսուրների համար մենք հատուկ
շենքեր ենք կառուցում, իսկ ուրիշ տեղերում հարմա-
րեցնում ենք հին շենքերը: Բայց թե նոր կառուցումը
և թե հին շենքի խոշոր վերակառուցումը մեզնից ժա-
մանակ են պահանջում, իսկ մսուրները մեզ հարկավոր
են հենց այժմ, անհապաղ:

Ուրեմն յեղած շենքերի միջից պետք է ընտրու-
թյուն անել և հարմարեցնել նրանց մսուրների համար:

Մսուրների համար ընտրած խրճիթը պետք է լինի
արձակ, հնարավոր չափով շրջապատված լինի կանաչով
և հեռու գտնվի ճանապարհից և աղբ թափելու
տեղից:

Մսուրների համար կարելի յե հարմարեցնել կու-
լակի կամ կալվածատիրոջ տները:

Յեթե ձեռք է բերված հարմար շենք, բայց բակը
մաքուր չէ, կամ կանաչ չունի—պիտոներնրը պետք է

61073-67

ողնն բակը մաքրելուն, ծառեր ու ծաղկանոց տնկելուն, բանջարանոց սարքելուն:

Մսուրների համար միայն շենք գտնելը դեռ բավական չէ. պետք է նրան և սարքավորել:

Մսուրների սարքավորման համար շատ և զանազան տեսակի իրեր են պահանջվում-ամանեղեն, խաղալիքներ, կահկարասիք, սպիտակեղեն: Շատ անգամ մսուրները այդ բոլորը ձեռք բերելու հնարավորություն չունեն, իսկ առանց դրանց անհնարին է. ամեն մի յերեսա պետք է ունենա իր բաժակը, պնակը, գդալը, յերեսսրբիչը: Այդ իրերից շատերը կարող են տալ իրենք կոլտնտեսականները:

Պիտներները պետք է իրենց վրա վերցնեն մսուրների համար տնտեսավարների շրջանում՝ ամանեղեն, սպիտակեղեն, կահկարասի հավաքելու գործը:

Ատաղծագործական դեն ձգելու նյութերը՝ տուփեր, թիթեղյա բանկաներ, հարթ քարեր, կոճեր և այլն մսուրների յերեխաների համար կարող են ծառայել վորպես լավ խաղալիք:

Պիտներներն այդ բոլորը հավաքելու յեն մեծ քանակությամբ:

ՊԻՈՆԵՐՆԵՐԸ ՊԵՏԲ Ե ՄԱՍՆԱԿՅԵՆ ՄՍՈՒՐՆԵՐԻ ԱՅԽԱՏԱՆԲԻՆ

Մսուրներում աշխատանք շատ կա՝ պետք է հոգալ յերեխաների առողջության մասին, պետք է գրադավել նրանց զաստիարակությամբ: Ինչպես առաջինը, նույնպես և յերկրորդը պետք է կատարել հմտորեն, լավ ծանոթ լինելով այդ հարցերին: Մսուրներում աշխատելու համար պատրաստականություն է հարկավոր: Այս տարի պետք է բացվեն տասնյակ հազարավոր նոր մսուրներ, վորոնց համար պահանջվելու յեն տասնյակ հազարավոր մսուրային աշխատողներ, իսկ այդպիսի-

ները օլակասում են: Մեր յերկրում մեծ շինարարություն է կատարվում: Այս տարի մենք պետք է ավարտենք հնգամյա մեծ պլանի աշխատանքները: Իսկ դրա համար մեզ հարկավոր են բանվորական ձեռքեր: Յերկրի ինդուստրացումը բանվորների նոր միլիոններ է օլահանջում: Այն ժամանակ, յերբ կապիտալիստական յերկրներում տասնյակ միլիոնավոր գործազուրկներ կան, ԽՍՀՄ-ում անգործներ չկան: Սոցիալիստական շինարարությունը մասնակցում են բոլոր աշխատավորները: Ընդհակառակը, այժմ ԽՍՀՄ-ում բանվորական ուժի խիստ պակասություն է զգացվում. մեծ պակասություն ունենք նույնպես մսուրային աշխատավորների: Ահա այս ասպարիզում պիտներները կարող են մեծ ոգնություն ցույց տալ: Մսուրներում կան այնպիսի աշխատանքներ, վորոնք հաջողությամբ կարող են տանել պիտներները: Աշխատանք կատարելով մսուրներում, պիտներները լրացնում են մսուրային աշխատողների պակասը:

Ահա այդ պատճառով պիտներները պետք է մասնակցեն մսուրների աշխատանքին:

Տեսնենք, ինչու՞մն է կայանում մսուրների աշխատանքը և ինչպես պետք է մասնակցեն պիտներներն այդ աշխատանքին:

ՄՍՈՒՐՆԵՐԸ ՊԱՅԲԱՐՈՒՄ ԵՆ ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ՄԱՀԱՑՈՒԹՅԱՆ ԳԵՄ

Թագավորի ժամանակ, մինչև հեղափոխություն— մանուկների մահացությունը մեր յերկրում շատ բարձր էր՝ տարեցտարի մահանում էր մի տարում ծնված յերեխաների համարյա թե մի յերրորդ մասը:

Ամենից շատ մահանում էլին գյուղացիների և բանվորների յերեխաները և հաճախ մահվան պատճառն ամառային փորհարինքն էր: Խորհրդային իշխանու-

թյունը մանուկների մահացութեան դեմ տանում է յե-
ռանդուն և հաջող պայքար: Այժմ Խորհրդային Միու-
թյան մեջ մեծնում է ծնված յերեխաների միայն մեկ
վեցերորդ մասը,— ուրեմն մահացությունը պակասել է
յերկու անգամ: Բայց այդ հետևանքները դեռ բավարար
հաշվել չի կարելի: Պետք է ավելի ևս պայքարել մա-
նուկների մահացությունը իջեցնելու համար: Մսուրնե-
րը-դա այն զենքերից մեկն է, վորոնց ոգնութեամբ
մենք պայքարում ենք մանուկների հիվանդութեան և
մահացութեան դեմ:

Մանկան առողջապահութեան համար պայքարում
ամենագլխավորը կայանում է նրանում, վոր մսուրները
անցկացնեն սանհտարական միջամում: Մանհտարական
միջամումը— դա մանկան առողջապահութեան համար
խիստ կարևոր և միաժամանակ մատչելի միջոցառում-
ներն են:

Սանհտարական միջամումը մսուրներում կայանում
է հետևյալ միջոցառումների մեջ. —

1. ՊԵՏԲ Ե ՊԱՇՏՊԱՆՆԵԼ ՅԵՐԵՄԱՆԵՐԻՆ ՎԱՐԱԿԻՉ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ

Դրանցից առաջին հերթին փոքր յերեխաների հա-
մար ամենասուսկալի հիվանդութեանն է— ամառային
փորհարինքը: Վարակիչ հիվանդութեանների դեմ հա-
ջողութեամբ պայքարելու համար պետք է իմանալ դը-
րանց պատճառը:

ՎԱՐԱԿԻՉ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՏԱՐԱԾՎՈՒՄ ԵՆ ՄԱՆ-
ՐԵՆԵՐԻ ՄԻՁՈՑՈՎ

Բացի գոյութեան ունեցող կենդանի արարածների
տեսանելի աշխարհից,— մարդիկ, զազաններ, թռչուններ,
ձկներ և ամեն տեսակի բզեզներ,— գոյութեան ունի
նաև հասարակ աչքով անտեսանելի արարածների՝ ման-

րենների աշխարհ: Մանրեններն այնքան մանր են, վոր
նրանց կարելի չէ դիտել միայն խիստ մեծացնող ապա-
կիներ ունեցող գործիքով, վորը կոչվում է խոշորացույց
(միկրոսկոպ):

Մանրենների մի քանի տեսակներն հատկութեան
ունեն մարդկանց և կենդանիների մեջ հիվանդութեան-
ներ առաջ բերելու:

Զնայած մանրենների աննշան մեծութեանը, նրան-
ցից առաջացած հիվանդութեանները հաճախ լինում են
ծանր, կյանքի համար շատ վտանգավոր, իսկ յերբեմն
ե՛լ մահացու:

Բոլոր վարակիչ հիվանդութեանները, բծավոր ու
անդրադարձ ախֆերը, փորհարինքը, խոլերան, դիֆտե-
րիտը, սկարլատինան, գրիպպ, կարմրուկ, կապույտ հագ
(КОКЛИУШ), թոքախտ, արյունային փորհարինք և այլն-
առաջացնում են մանրենները: Յերեխաների ամառա-
յին փորհարինքի պատճառն էլ մանրեններն են:

Իհարկե մեկ-յերկու մանրե չեն կարող
հիվանդութեան առաջացնել մարդու մեջ, մանավանդ
ծանր հիվանդութեան: Դժբախտութեանը նրանումն է,
վոր յերբ մարդու մարմնի մեջ բուն է դնում մանրեն,—
ստամոքսում, աղիքներում, արյան մեջ, թոքերում,—
այդտեղ դրանք բազմանում են չլաված արագութեամբ:
Մեկ-յերկու որ անց մարդու որդանիզմում նրանք ար-
դեն միլիոններ են կազմում և այդ գեպքում նրանք
յուրջ վտանգ են սպառնում: Մանրենները մարդու որդա-
նիզմի մեջ ուժեղ թույներ են պատրաստում: Ահա
այդ թույներն են մարդու հիվանդութեան պատճառը,
ուստի—

Նույնիսկ մի մանրեն վտանգավոր է մեզ համար:
Սակայն վոչ ամեն մանրե, վոր բուն է դրել մար-
դու մեջ, հիվանդութեան է առաջացնում: Առողջ որ-
դանիզմում մանրենները հանդիպում են իրենց համար
անբարեհաջող պայմանների: Յեթե մանրեններն ողի հե-

ներս են ընկնում քթի մեջ կամ ավելի խորը— շնչառութեան որգանները, այդ դեպքում նրանք յետ են բերվում հաճախակի թաղանթի թերթերունքների շարժումով, վորոնցով ծածկված են քիթն ու շնչառութեան ուղիները: Բացի դրանից, այն լորձուկը, վոր գոյանում է թաղանթի մակերեսի վրա, ինքնըստինքյան մանրեների անձաման և բազմացման համար աննպաստ է: Մարդու ստամոքսն անցնող մանրեներն հաճախ ստամոքսային հյուսթի ազդեցութիւնից վոչնչանում են: Դեռ ելի ուրիշ շատ աննպաստ պայմանների յեն հանդիպում նրանք առողջ մարդու որգանիզմում:

Մինչդեռ հիվանդ մարդու որգանիզմում մանրեներն անհամեմատ բազմանալու ավելի հնարավորութիւն ունեն: Քթի և շնչառութեան որգանների հիվանդ թագանթի միջոցով նրանք յետ չեն քշվում, հիվանդ ստամոքսում չեն վոչնչանում, վորովհետև հիվանդ ստամոքսը սովորական հյուսթ չի արտադրում: Հիվանդ, ուժասպառ որգանիզմում նրանք հանդիպում են իրենց համար և այլ բարենպաստ պայմաններին: Ահա այդ պատճառով ել թույլ, հալից ընկած, անկանոն սնվող յերեխաներն ավելի յեն տանջվում ամառային փորհարինքից, քան ամուր, առողջ յերեխաները:

Մանրեները կարող են բազմանալ և մարդկային որգանիզմից դուրս, յեթե նրանք բարենպաստ պայմաններ ունեն իրենց համար: Բազմանալու համար նրանց պետք է սնունդ, տաքութիւն և խոնավութիւն: Տաք կաթում, մսաջրում նրանք կարող են բազմանալ:

Տաքութիւնից նրանք շատ արագ են բազմանում: Բայց խիստ ուժեղ տաքութիւնից— յետումից մանրեները վոչնչանում են:

Այս բոլորը պետք է իմանալ մանրեների և նրանցից տառաջացած հիվանդութիւնների դեմ պայքարելու համար:

Ամեն մի թշնամու դեմ պայքարելիս մենք ձգտում ենք՝

1. Ուժեղացնել մեր ռազմունակութիւնը:
 2. Վոչնչացնել կամ թուլացնել թշնամուն:
 3. Չթողնել թշնամուն, վոր նա ներս խուժի մեր տերրիտորիան:
- Այս յերեք ուղիներով ել պետք է առաջնորդվել յերեխաների վարակիչ հիվանդութիւնների դեմ պայքարելիս:

ՊԵՏԲ Ե ԱՄՐԱՅՆԵԼ ՅԵՐԵՆԱՆԵՐԻՆ

Ուժեղ որգանիզմում մանրեների բազմանալու պայմանները պակաս չափով են նպաստավոր, քան թույլ որգանիզմում:

Այդ իսկ պատճառով ել պետք է հոգալ յերեխաների ամրապնդման, նրանց մաքրութեան մասին, ապահովել նրանց արևի լուսով, մաքուր ոդով, կանոնավոր սնունդով:

Ուրեմն վարակիչ հիվանդութիւնների դեմ պայքարում անհրաժեշտ է սանիտարական միջամտման բոլոր պահանջների կիրառումը:

2. ՊԵՏԲ Ե ՀՈԳԱԼ ՄԱՔՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Յերեխան թե ինքը պետք է լինի մաքուր և թե նրա վրայի ամեն ինչը— բալուլը, շորերը, նրա շուրջը, անկողինը:

Անհրաժեշտ է հնգորյակում մեկ անգամ սապոնով ու տաք ջրով լվանալ յերեխաներին և ամեն որ վրաները ցնցողով ջուր ածել, իսկ բոլորովին փոքրերին պետք է ամեն որ լողացնել: Դնից առաջ յերեխաները պետք է լվանան վոտքերը:

Մսուրների շենքը պետք է ամեն որ մաքրել թաց շորով սրբել կահկարասիքը, հատակները լվանալ:

Յերեխայի անկողինը հնգորյակում մեկ անգամ պետք է դուրս տանել, տալ քամուն, արևին:

Մեկ տարեկանից մեծ յերեխաներն սպիտակեղենը պետք ե փոխեն յերկու որը մեկ անգամ, մինչև մեկ տարեկանները—որընդմեջ:

3. ՅԵՐԵՒԱՆԻՆ ԱՆՅՐԱԺԵՑ ԵՆ ՄԱՐՈՒՐ ՈՂՆ ՅԵՎ ԱՐԵՎԻ ԼՈՒՅՍԸ

Առանց մաքուր ողի և արևի յերեխաները լինում են հիվանդ, նիհար:

Ամառ թե ձմեռ յերեխաներին փորքան կարելի յե յերկար պետք ե պահել մաքուր սղում:

Մաքուր ողի մասին պետք ե հոգալ, և բնակարանի ներսում ձմեռը որական յերեք անգամից վոչ պակաս պետք ե բաց անել ողանցքները, ամառն ամբողջ որով բաց անել պատուհանները, իսկ վորտեղ հնարավոր ե, և դիշեր ժամանակ:

Չափից դուրս տաքության մեջ լինելը թուլացնում ե յերեխաներին և նպաստում փորհարիւնքին: Այդ պատճառով ամառ ժամանակ փոքր յերեխաները պետք ե հազնվեն թեթեւ, նույնիսկ բոլորովին մերկ լինեն:

4. ՊԵՏԲ Ե ՀՈԳԱԼ ՅԵՐԵՒԱՆԵՐԻ ԿԱՆՈՆԱՎՈՐ ՄՆՈՒՆԴԻ ՄԱՍԻՆ

Փոքր յերեխաները կանոնավոր սննդի կարիք են դգում:

Յերբ յերեխաները անկանոն են կերակրվում, անկանոն ել գարգանում են, հաճախակի ստամոքսային խանգարումներ են առաջ դալիս, վորոնց պատճառով յերեխաները սաստիկ մաշվում են:

Փոքր յերեխաներն ամեն տեսակ կերակուր չեն մարսում: Կյանքի առաջին կես տարում նրանք լավ մարսում են միայն ծծի կաթը: Նրանց համար կովի անխառն մաքուր կաթը նույնիսկ անպետք ե՝ այդ կաթը պետք ե ջրախառն դարձնել:

Կյանքի յերկրորդ տարում մանկական ստամոքսը սկսում ե աստիճանաբար մարսել և ուրիշ կերակուր, միայն կաթը նրան արդեն չի բավարարում:

Մի տեսակ սնունդը միանգամից փոխել մի ուրիշով մանկան համար փաստակար ե—դա կարող ե առաջ բերել մանկական ծանր ստամոքսային հիվանդութիւուն:

ՆՈՐ ՄԵՆՈՒՆԴԻՆ ՅԵՐԵՒԱՆԵՐԻՆ ՊԵՏԲ Ե ՎԱՐԺԵՑՆԵԿ ԱՍՏԻՃԱՆԱԲԱՐ:

Գյուղերում մայրերը շատ անգամ յերեխաների բերանն են խոթում շորի կտորի մեջ կապած ծամած շաքարով հաց:

Հիշիլը, պիոններ, վոր ծամվածքը մանկան համար թույն ե: Ել չենք խոսում նրա մասին, վոր փոքրիկ մանկական ստամոքսը հաց մարսել չի կարող, ուրիշի բերանում ծամածի մեջ միշտ ել մանրեներ կան, վորոնք մանկան մեջ առաջացնում են վտանգավոր, իսկ յերբեմն ել մահացու հիվանդութիւններ:

Պիոնները և գործով և խոսքով պետք ե պայքարի ծամվածքի դեմ:

5. ՀԱՏՈՒԿ ՈՒՇԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՊԵՏԲ Ե ԴԱՐՁՆԵԿ ԱՄԱՌԱՅԻՆ ՓՈՐՎԱՐԻՆՔԻ ԴԵՍ ՊԱՅԳԱՐԵԼՈՒՆ

Ամուր ու առողջ յերեխան ել շուտ չի հիվանդանում փորհարիւնքով, իսկ յեթե հիվանդանում ե, յեշտությամբ ե տանում հիվանդութիւնը: Բայց և այնպես նա կարող ե հիվանդանալ փորհարիւնքով: Այդ իսկ պատճառով պետք ե միջոցներ ձեռք առնել փորհարիւնքի դեմ:

Ամառային փորհարիւնքն առաջացնում են մանրեները, վորոնք գտնվում են մարդկային կղկղանքի աղբի, փթած, դեն դցած ավելցուկների մեջ:

Յերեխաները փորհարինքով հիվանդանում են այն դեպքում, յերբ կուլ են տալիս այդ մանրենները:

Մանրենները պետք է փոշնչացնել: Պետք է ձեռք առնել բոլոր միջոցները, վորպեսզի յերեխաները ապահովված լինեն մանրեններից:

Անհրաժեշտ է, վոր այդպիսի անմաքրություններից ազատ լինեն բակերն ու փողոցները:

Պիոներները պետք է ոգնեն կոլտնտեսութեան առողջապահական բջիջին, յերբ նա պայքարում է բակերի մաքրութեան համար, յերբ նա պայքարում է ծածկած աղբի փոսերի համար, աղբապահեստանոցներ կառուցելու, իր ժամանակին մաքրելու և աղբը դուրս տանելու համար:

Վորջան քիչ անմաքրություններ, ենքան քիչ ամառային փորհարինք առաջացնող մանրենների բներ:

ԱՄԱՌԱՅԻՆ ՓՈՐՀԱՐԻՆՔԻ ՄԱՆՐԵՆՆԵՐԻ ԻՆՉՊԵՍ ԵՆ ԸՆԿՆՈՒՄ ՄԱՆԿԱՆ ԲԵՐԱՆԸ

Առաջին հայացքից տարորինակ է թվում, թե ինչպես մանրենները կղկղանքից, աղբից ու նեխված անմաքրություններից կարողանում են մանկան բերանն անցնել:

Մանրենները շատ մանր են. հասարակ աչքով անտեսանելի. անմաքրութեան մեջ զրանք լինում են մեջ քանակութեամբ: Իսկ այդպիսի կեղտոտությունների մասնիկներ մենք ներս ենք բերում մեր վտրեքով և կոշիկներով և տարածում ամեն տեղ, վորտեղ վտաք ենք կոխում:

Յերեխաները խաղում են հատակին և կեղտոտում ձեռքերը, իսկ հետո բերանները կոխում: Բերաններն են տանում և ամեն տեսակի կեղտոտ, հատակից հավաքած իրերը և հատակին ձգած խաղալիքը:

Ահա թե ամառային փորհարինքի մանրեններն ինչպես են անցնում յերեխաների բերանը:

Պակաս դեր չեն խաղում և ճանճերը: Նրանք, նստելով դանազան կերտոտությունների վրա, կեղտոտում են իրենց թաթիկներն ու կնճիթները: Հետո, յերբ նստում են կերակրի ու ամանների վրա, այդտեղ նրանք թողնում են կեղտոտությունների փոքրիկ մասնիկներ, իսկ նրանց հետ նաև մանրեններ: Յերեխան ուտում է այդ մթերքները, ուտում է այդ ամաններից և այդպիսով մանրեններն անցնում են նրա ստամոքսը:

Կա վերջապես և յերրորդ ճանապարհը՝ կաթի միջոցով: Յեթե կովը կեղտոտ է պահվում, յեթե կիթը տեղի յե ունենում կեղտոտ ախոռում, յեթե կով կթողի ձեռքերը կեղտոտ են, յեթե կթի ամանը ենքան ել մաքուր չէ,—կովից ստացված կաթը կեղտոտվում է մանրեններով: Կաթի մեջ այդ մանրենները շատ հեշտութեամբ են բազմանում, մանավանդ տաքութեան մեջ: Այդպիսի վարակված կաթն ամառային փորհարինքին աղբյուր է ծառայում:

Ինչպես պաշտպանել յերեխաներին, վոր նրանք ամառային փորհարինքի մանրեններ չմտցնեն բերանը: Դրա համար պետք է՝

- 1) Մրճիթ ներս մտնելիս լավ մաքրել վտրեքերը:
- 2) Լվանալ ամեն որ հատակները:
- 3) Ուտելուց առաջ մաքուր լվանալ յերեխայի ձեռքերը:
- 4) Հատակից վերցրած իրերը յերեխային տալ միայն այն դեպքում, յերբ այդ իրերը կվազվեն տաք, յեռացրած ջրով:

Այս ամենը պիտեք պետք է խմանա, հետևի այս կանոններին մտուրներում և այդ բոլորը բացատրի մայրերին:

Անողոր պայքար ճանճերի դեմ: Մեզ մոտ խիստ տարածված այդ միջատները վոչ միայն ամառային

փորհարինք են տարածում, այլ ուրիշ շատ վնասակար վարակիչ հիվանդություններ, փորովայնի ախի, խոլերա, թոքախտ և այլն:

Ճանճերը բազմանում են աղբի ու կեղտի մեջ: Պետք է զրկել զբանց այդ հնարավորությունից: Կառուցել ծածկած աղբահորեր, շուտ-շուտ դատարկել այդ հորերը, իր ժամանակին հեռացնել աղբը:

Բնակարաններում պատուհաններին մառլից ցանցեր անցկացնել: Պետք է հավաքել փշրանքները, կեղտոտ ամանեղենը փորոնք զրավում են ճանճերին: Մթեղքները և ամանեղենը պետք է պահել կամ պահարանում, կամ ծածկել մաքուր սրբիչով: Պատուհանների և սեղանների վրա պետք է դնել ճանճփորանքներ և կպչուն թղթեր:

Պիոններնը պետք է ոգնեն առողջապահական բջիջին բակերի սանիտարական դրության բարձրացնելու պայքարում, առորյա կյանքում պայքարեն ճանճերի դեմ: Վերջապես, ամառային փորհարինքի դեմ պայքարելիս խիստ կարևոր է կթելու ժամանակ պահպանել կաթը կեղտոտովելուց: Գոմը պետք է մաքուր լինի: Կթելուց առաջ պետք է կովի պոչը կապել, յեփած ջրով լվանալ ծծերը, կով կթող կինը պետք է հազնված լինի մաքուր, գլուխը կապի լաչակով (թաշկինակով): Կթելուց առաջ նա պետք է սապոնով մաքուր լվանա ձեռքերը: Կաթի ամանը անպայման պետք է լինի մաքուր:

Ահա պիոններների համար աշխատանք—յերեխանների համար կովերին կթելու և կաթ ստանալու ժամանակ հետևել մաքրության:

6. ԻՆՉ ՊԵՏԲ Ե ԻՄԱՆԱ ՊԻՈՆԵՐԸ ՄՍՈՒՐՆԵՐԻ ՅԵՐԵԽԱՆԵՐԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Մսուրները միայն յերեխաների առողջության հարցով չեն մտահոգված, —նրանք պետք է ուղիղ դաս-

տիտրակեն յերեխաներին, ամրացնեն նրանց մեջ առողջապահական, աշխատանքային և կուլեկտիվ ունակություններ:

Պիոններնը այդ աշխատանքում պետք է ոգնեն դաստիարակներին:

Պիոններնը պետք է իմանան, վոր՝
1) Յերեխաները պետք է ուտեն միայն սեղանի մոտ նստած:

2) Ամեն մեկը պետք է ուտի առանձին ամանից, առանձին գրպով:

3) Յերեխաները չպետք է թափեն կերակուրը և փշրանքները:

4) Յերեխաներն իրենց բնական պետքերը պիտի կատարեն չուքալում (на горшке):

5) Ամեն մի յերեխա պետք է իր առանձին յերեսսրբիչն ունենա:

6) Յերեխաները բաց անդրավարտիկներով չպետք է վազվզեն:

7) Գնից և զբոսանքից առաջ յերեխաներին պետք է չուքալի վրա նստեցնել:

8) Պետք է սովորեցնել յերեխաներին, վոր կղկղանքից հետո խնդրեն սրբել իրենց:

9) Պետք է վարժեցնել յերեխաներին ուժերի համաձայն աշխատանքի խաղալիքները հավաքել, գդախներ ու բաժակներ տանել:

10) Պետք է վարժեցնել յերեխաներին խմբակային որսապահության:

11) Պետք է վարժեցնել յերեխաներին ոգնել ընկերաներին և իրենցից փոքրերին (կոճակները կոճկել, կոշիկները հանել, անձրևաջրով լցված փոքրիկ փոսերը անցնել):

12) Մսուրներում որը այնպես պետք է դատավորել, վոր քունն ու արթուն կենալը, արթուն ու զբոսանքն ու հանգիստը իրար հաջորդեն:

И. И. СТИЧЕВ
ВОСТОЧНО-ФИЛИП
Академии Наук
СССР

Մսուրների վերոհիշյալ բոլոր աշխատանքներում պիոներները կարող են և պետք է ամենաակտիվ մասնակցութիւն ունենան, բայց այդ ել դեռ բոլորը չեն:

7. ՊԻՈՆԵՐՆԵՐԸ ՊԵՏԲ Ե ՈԳՆԵՆ ԿԵՆՅԱԼԻ ԱՌՈՂՋԱՑՄԱՆԸ ԿՈՆՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Մսուրներն իրենց աշխատանքը դուրս են բերում իրենց հիմնարկի պատերից:

Մսուրների յերեխաները ժամանակի մի մասը տանն են անցկացնում: Նրանց համար տանն ել պետք է առողջ միջավայր ստեղծել:

Պիոներները կարող են և պետք է ոգնեն կուլտուրականների ընտանեկան կենցաղի առողջացմանը:

Նրանք պետք է պայքարեն բնակարանների մաքուր և թարմ ողի համար, բակերի և փողոցների մաքրութեան համար, նրանք պետք է պայքարեն անկանոն կերակրելու դեմ, մանավանդ ծամոցների, ճանճերի դեմ, վորոնք մահացու հիվանդութիւնների վարակման տարածողներն են:

Վերջապես, պիոներները պետք է մասնակցեն անպրազիտութիւնը վերացնելուն, վոր խանգարում է կենցաղի շուտափուլթ առողջացմանը:

Պիոներները պետք է կազմակերպված մասնակցեն մսուրների աշխատանքին և ոգնեն այդ մեծ գործին:

Պիոներները—կոմունիզմի ջահել կառուցողներն են: Իրենց աշխատանքով նրանք ոգնում են վերակառուցելու մեր հին անկուլտուրական կենցաղը, ոգնում են անցկացնելու կյանքում անտեսական սլլանները, ոգնում են հնգամյակի հսկա աշխատանքների կիրառմանը, ոգնում են սոցիալիզմի կառուցմանը:

Ответственный редактор
М. М. Гигоян
Технический редактор
Г. М. Маркарян

№ 2222

1932

Сд. в набор 25/1—1932 г.
Сд. в печать 29/11—19'2 г.
Об'ем 1/2 печ. листа
Тираж 2000 экз

«Ազգային գրադարան»



NL0185031

12569

256

CA 32-4
129

my

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР



На армянском языке

С. БАХМУТСКАЯ

Чем пионер может помочь
воспитанию здоровой смены

И-во „СЕВЕРНЫЙ КАВКАЗ“

ԳՐԱԳՍԱԶՅՈՒՅՑ

ՎՈՍՏՈՂ-ԴՈՆ, ՄՍՍՈՂՍՍՈՒՄՈՒ ՓՈՂ., 3
ԳՐԱԿԵՆՏՐՈՆ (ԿԵՆՏՐՈՆԵՆՏՐ)